## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» թերթի խմբագրութիւնը յայտարարում է թէ Վիեն-
նայի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Յ. Վ. Տաշեանը կազմել է Միաբանութեան
մատենադարանի Հայ ձեռագիրների ցուցակը, որ այժմ տպագրւում է և պատրաստ
պիտի լինի առաջիկայ նոյեմբերի 1-ին: Այդ օրը Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը
տօնելու է Գերապատիւ Արսէն արքեպիսկոպոս Այտնեանի քահանայութեան և ուսում-
նական գործունէութեան 50-ամեայ յոբելեանը: Ցուցակը բաղկացած պիտի լինի մօտ
1000 երեսից, քառածալ, լուսատիպ և գունաւոր տախտակներով:
Բաժանորդագինն է 15 ռուբլի. բաժանորդագրութիւնը կարելի է մինչև սեպտեմբերի 15-ը:
Ցանկացողները պիտի դիմեն կամ Vienne (Autriche). Rédaction de la Revue „Hantess", VII/2 Mechitharisteng. 4, կամ «Հանդէսի» գործակալներին:

---

### ՆԵՐԿԱՅ 1895 Թ. ՍԿՍԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼՈՒ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԿԻՍԱՄԵԱՅ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ.

Բաժանորդագինն է 5 ֆրանկ կամ 2 ռուբլի կանխիկ.
Խմբագրութեան հասցէն՝ Въ Шушу, Е. Лалаянцъ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՐ. ԼԱԼԱՅԵԱՆ

---

### ՔԱՂՈՒՄ ԵՆՔ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

### 1895-96 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՅԱՅՏԱԳՐԻՑ ՀԵՏԵՒԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

**ՎԱՐԺԱՐԱՆՍ** ունի երկու բաժին. 1) Ուսումնական և 2) Արհեստագիտական.
*Ուսումնական բաժինը*, որ իր ծրագրով կհամապատասխանէ Գերմանացւոց Միջնակարգ Վարժա-
րաններուն, ունի եօթն դասարան, իւրաքանչիւրը մէկ տարուան ընթացքով:
Ուսմանց առարկայներն են.
1. Կրօն, 2. Եկեղեցական պատմութիւն, 3. Հայերէն, 4. Տաճկերէն, 5. Գաղղիերէն, 6. Գերմաներէն,
7. Անգղիերէն (կամաւոր) 8. Պատմութիւն, 9. Աշխարհագրութիւն բնական, քաղաքական, առևտրական և
ուսումնական, 10. Բնական գիտութիւնք (Բնապատմութիւն, Տարրաբանութիւն եւ Բնաբանութիւն). 11. Ուսողու-
թիւն (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Դանկիւնաչափութիւն) և Տօմարակալութիւն, 12. Գեղա-
գրութիւն, 13. Գծագրութիւն, 14. Երգ, 15. Դաշնակ (կամաւոր), 16. Ջութակ (կամաւոր), 17. Մարմնա-
մարզ.

*Արհեստագիտական բաժին.* Վարժարանս, որ իւր հիմնարկութենէն 'ի վեր հետամուտ եղած է
երկրին իրական պէտքերուն գոհացում տալու և յատկապէս արհեստներու զարգացման նպաստելու՝ կիրթ
և հմուտ արհեստաւորներ պատրաստելով, այս տարուընէ սկսեալ ուրոյն կազմակերպութիւն մը կուտայ
իւր Արհեստագիտական բաժնին.
Այս բաժինը ունի չորս տարուան ընթացք. Ուսանելի արհեստներն են առ այժմ Կահագործութիւն
և Կոշկարարութիւն՝ հանդերձ իրենց ճիւղերով. Արհեստաւոր աշակերտները պարտաւոր են Ուսումնա-
կան բաժնին մէջ հետևիլ այս ուսմանց. Կրօն, Եկեղեցական Պատմութիւն, Տաճկերէն. Եւրոպական լեզու
մը (զոր կընտրէ Ուսուցչական ժողովը), Առևտրական աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Տօմարակա-
լութիւն, Երկրաչափութիւն, Բնապատմութիւն, Բնաբանութիւն, Տարրաբանութիւն, փայտի և երկաթի
Արհեստաբանութիւն, Արհեստագիտական գծագրութիւն և Երգ.
Արհեստագիտական բաժնին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է.
ա. Լինի 14—18 տարեկան, ուշիմ և առողջ.
բ. Ունենայ այն ծանօթութիւնները, որոնք Ազգային Վարժարաններու Կազմական Կանոնագրով
սահմանուած են Տարրական Նախակրթարաններու համար.
Թէ Ուսումնական և թէ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր գիշերօթիկ աշակերտի համար
իբրև տարեթոշակ կվճարուի 20 Օսմ. ոսկի, որ կպարունակէ աշակերտին սնունդի, հագուստի լուացքի ու
մաքրութեան, բժշկի ու դեղի, ուսման ու դասագրքերու և այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը.

Ծանօթ. — Անկարելի է թէ այս տարեթոշակի գումարը չի բաւեր ամբողջովին գոցելու աշակերտին բոլոր ծախ-
քերը, այլ այդ պակասը կլրացուի Հոգևոր Հիմնադրին կտակած կալուածներէն:

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ

ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ՕՐԱՑՈՅՑ 1896 Թ.

ՎԵՀ. ՀԱՅՐԻԿԻ, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ԵՒ ԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԳԻՆՆ Է ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ **25** Կ.

*Ցանկացողները թող վաղօրօք դիմեն Տպարանի Վարչութեան: Խիստ պատասխանատուութեան կենթարկուեն այն գործակալները, որոնք նշանակած գնից աւելի գնով կվաճառեն:*

---

## ԲԱՑՈՒԱԾ Է

«ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ»

*ԺՈՂՈՎԱԾՈՒԻ*

VII և VIII ԳՐՔԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Երկու գիրքը ամփոփուած կը լինի մի հատորում ու բաղկացած մինչև 600 երեսից: Ի միջի այլոց նշանաւոր տեղ կը բռնէ հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանի ընդարձակ կենսագրութիւնը: Գիրքը լոյս կը տեսնէ առաջիկայ նոյեմբերին: Բաժանորդագինն է 3 ր., տպագրութիւնից յետոյ—4 ր.: Ցանկացողները դիմում են հետևեալ հասցէով. Москва, Мясницкая, д Ермакова.

*ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.*

---

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

# „ԹԱՏՐՈՆ„

*ԳՐԱԿ. ԵՒ ԹԱՏԵՐ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ 1895 ԹՈՒԱԿ.*

Ա. №-ը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*«Ակամայ բժիշկ» կօմէդիա. «Մեդէա» դրամա. «Ապահարզան» ոդբ. «Սպասումենք հիւրերին» կօմ. «Միհրդատ Ամրիկեան» «Գր. Աբրահամեան» «Ա. Ս. Գրիբօեդով» «Լուդովիկոս վան Բեթհովէն» կենսագրական: Յօդուածներ՝ «Թատրոնի լուսատու աստղերը» «Գիւղական Ընկերութիւն» «Թատրոնական քրոնիկոն» «Հայկական ներկայացումներ» «Արտիստական փորձեր» «Բանաստեղծութիւններ»:*

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ.

Մ. Ամրիկեան, Ա. Գրիբօեդով, Հայ Պետրաս. խումբը, «Աբասեան», Տ. Ադնիւ Հրաչեայ, Բեթհովէն, Փօրկատոր:

*Թատրոնի II-րդ №-ը լոյս կը տեսնէ նոյեմբերին: Շարունակւում է բաժանորդագրութիւնը:*

Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. 30 կ. Արտասահման 10 ֆրանկ.

*Հրատարակիչ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆՑ*

Դիմել հետևեալ հասցէով. Tiflis (Caucase, Russie). Alexandre Tarkhanian